ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«24» 12 2018թ. N 2/2/9407-18

«ԼԻՆԿ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաչատրյան,

Տեղեկացվում է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության /այսուհետ՝ նախարարություն/ և «Լինկ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կազմակերպություն/ միջև 2018 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 1.1 կետի համաձայն կազմակերպությունը պարտավորվել է նախարարությանը մատուցել հաշվապահական ծրագրի ներդրման ծառայություններ /այսուհետ՝ ծառայություններ/: Պայմանագրի N 1 հավելվածի համաձայն ծառայությունների մատուցման վերջնաժամկետ է սահմանվել 2018 թվականի դեկտեմբերի 20-ը:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն, մատուցված ծառայությունն ընդունվում է պատվիրատուի և կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է պատվիրատուի և կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ կատարողը պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (N 3.1 հավելված), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (N 3 հավելված): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Հաշվի առնելով, որ կազմակերպությունը վերը նշված փաստաթղթերն առ այսօր չի տրամադրել նախարարությանը և պայմանագրով նախատեսված ծառայությունները սահմանված ժամկետում չեն մատուցվել նախարարությանը, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 7.11 կետը ծանուցում եմ, որ

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 11) 52 37 73, ֆաքս. (374 11) 52 46 10
էլ. փոստ agro@minagro.am

նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 26-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ պայմանագրի ապահովման գումարը անհրաժեշտ է վճարել կազմակերպության կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում նշված շահառուի հաշվեհամարին:

24/12/2018

VERIFIED OCSP 24/12/2018 17:06:40 GMT+4

Signed by: MANASYAN MUSHEGH 2603630105

Հարգանքով՝

ՄՈՒՇԵՂ ՄԱՆԱՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

կատ. գնումների համակարգող
Ա. Ապերյան հեռ. 011-52-63-67